**Արձանագրություն N 4**

**Ապարանի համայնքապետարանի կարիքների համար «ԱՄ-ԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման նիստի շարունակության**

Ք.Ապարան «14» Մարտի 2018թ.

Ժամը՝ 13:30

Մասնակցում էին՝

**Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝** Աբրահամյան Գոռ - Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

**Հանձնաժողովի անդամներ՝**

Կարապետյան Արկադի - Համայնքի ղեկավարի խորհրդական (ԳԱ),

Մանուկյան Արթուր - Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ (ԳԱ),

Պապիկյան Վահե - Աշխատակազմի առաջատար մասնագետ (ԲԱ)

Շահբազյան Հովհաննես - Ավագանու անդամ (ԲԱ)

**Գնումները համակարգող՝** Միեր Ամիրյան - Աշխատակազմի Գլխավոր մասնագետ(ՄՀմ)

**Օրակարգ**

**1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին**

---

(Գ.Աբրահամյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում եզրակացություն չի ներկայացվել:

Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

1.2 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակիցների կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև գնման առարկաների իրենց կողմից առաջարկված տեխնիկական բնութագրերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

**2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին**

---

(Գ.Աբրահամյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| «Նիկոլ Դուման» ԱԿ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

### 3. ԱՄ-ԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/06 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

---

(Գ.Աբրահամյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԱՄ-ԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Նիկոլ Դուման» ԱԿ -ին:

3.2 Համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի 10-րդ հոդվածի՝ հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը. և սահմանել անգործության ժամկետ 5 օրացուցային օր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

### 4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

---

(Գ.Աբրահամյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել անգործության ժամկետը լրանալու հաջորդ օրը ժամը 14:00-ն:

| | | |
|---|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ | ____________ | Աբրահամյան Գոռ |
| հանձնաժողովի անդամներ՝ | ____________ | Կարապետյան Արկադի |
| | ____________ | Մանուկյան Արթուր |
| | ____________ | Պապիկյան Վահե |
| | ____________ | Շահբազյան Հովհաննես |
| Գնումները համակարգող | ____________ | Ամիրյան Միեր |